



0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01

Էլ. ասցե: hven@hven.am, www.hven.am

No. 06-21 / 201 2022թ.

Հ Ր Ա Մ Ա Ն
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» ենթակետի պահանջով և հաշվի առնելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի ծրագրի ղեկավար Արտավազդ Ավետիսյանի «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի 2022 թվականի հունվարի 05-ի № Ն/10.9/69-2022 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության և «Կասկադ Էներգո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև 2020 թվականի հուլիսի 24-ին կնքված Ընկերության 220/110/35 կՎ «Լիճք» ենթակայանի վերակառուցման թիվ «ԲԷՑ-ԼԻՃՔ-ՄԱԱՇՁԲ-01/2020» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կապալառուի կողմից կատարողական ակտերով ներկայացվող աշխատանքներն ընդունելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) հետևյալ կազմով՝

Արտավազդ Ավետիսյան - Ընկերության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի ծրագրի ղեկավար (Աշխատանքային խմբի ղեկավար),


Վահագն Թադևոսյան - Ընկերության շահագործման ծառայության «Հյուսիսարևելյան» տեղամասի գլխավոր ճարտարագետ,

- Սոս Սարգսյան - Ընկերության շահագործման ծառայության «Հյուսիսարևելյան» տեղամասի «Լիճք» ենթակայանի պետ,
- Հակոբ Պետրոսյան - Ընկերության շահագործման ծառայության «Հյուսիսարևելյան» տեղամասի առաջատար ճարտարագետ (ՌՊԱ և ԲՓ խմբի ղեկավար),
- Ավետիք Ավետիսյան - Ընկերության վերահսկման և գույքի կառավարման բաժնի տեխնիկական հսկիչ:

2. Աշխատանքային խմբին՝ ուսումնասիրել Կապալառուի կողմից Ընկերությանը ներկայացված՝ կատարված աշխատանքների ծավալների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը, ստուգել դրանց համապատասխանությունը Պայմանագրի պահանջներին, կատարման ժամկետներին և անհամապատասխանությունների բացակայության դեպքում հաստատել դրանք:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Ընկերության գլխավոր ճարտարագետի տեղակալ Արսեն Գաբրիելյանին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ